

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/4**

ք. Երևան

20.06.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ՊՐՈՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Հ. Հունանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

### **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Դովեղի միջնակարգ դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը (Հավելված N 1.2):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին և տեխնիկական բնութագրին համապատասխան (Հավելված N 1 և Հավելված N 1.1):

1.3 Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման սկիզբ է համարվում Պատվիրատուի կողմից աշխատանքները սկսելու վերաբերյալ ծանուցման մեջ նշված օրը և աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծով նախատեսված 365 օր, որից 120-ը՝ հենապատի համար:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են պայմանագրի օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### **2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշ-վային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ հավելված N 2-ով սահմանված պայմանագրի կատարման փուլերը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագրի կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման գինը կազմում է 1 055 207 442 (մեկ միլիարդ հիսունհինգ միլիոն երկու հարյուր յոթ հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 985 000 000 (ինը հարյուր ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որից 164 166 667 (մեկ հարյուր վաթսունչորս միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճար կտարամադրվի միայն այն պարագայում, երբ Կապալառուի կողմից իրականացված կլինեն շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ, իսկ նշված միջոցառումների իրականացված լինելու փաստը կարձանագրվի և պատվիրատուին գրավոր կտեղեկացվի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններն իրականացնող կազմակերպության կողմից:

Ընդ որում կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագրով նախատեսված արժեքի 30 տոկոսի չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը

գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝ ԱԳ=ԿԾ\*ՊՏ՝

ԱԳ- ավելացվող գումար,

ԿԾ- պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%-ը,

ՊՏ- պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ\*:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	350 000 ՀՀ դրամ
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	1 000 000 ՀՀ դրամ
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	700 000 ՀՀ դրամ

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (ինսյուրություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 6) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի վավերապայմաններում Կապալառուի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ

համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը (համաձայնագրերը) կնքում, իսկ ապահովումները ներկայացնում, կամ տուժանքի ձևով ներկայացված ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝**


ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011048635  
ՀՎՀՀ 02565827


**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ՝**

«ՊՐՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբանցք, 10-21  
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ  
Հ/Հ 22049333088400  
ՀՎՀՀ 01266827

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

  
Գ. Եղիազարյան  
Կ.Տ.

  
Հ. Հունանյան  
Կ.Տ.

**ՀՀ Տավուշի մարզի Դովեղի միջնակարգ դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
1	2	3	4	5	6
				1.29372	
	<b>1-1. Համաշինարարական աշխատանքներ</b>				
1	<b>Հողային աշխատանքներ</b> IV-րդ կարգի գրունտի մշակում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողլիցք	խմ	175	0.957	167.400
2	V-- -VI-րդ կարգի գրունտի քանդում (փխրեցում) հիդրոնուրճով	խմ	120	8.409	1009.103
3	V-րդ կարգի փխրեցված գրունտի մշակում 0.65 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոմեքենայի վրա	խմ	120	0.861	103.325
4	III-րդ կարգի գրունտի մշակում խրամուղիներում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողլիցք	խմ	100	0.737	73.678
5	Փոսորակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	10	5.233	52.325
6	Գրունտի ետլիցք բուլդոզերով հատակների տակ	խմ	301	0.101	30.551
7	Գրունտի տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	502	0.454	227.988
8	Գրունտի ետլիցք հիմքերի ծոց ձեռքով, տոփանումով	խմ	47	2.102	98.789
9	Ավելորդ գրունտի տեղափոխում 3կմ հեռ.	խմ	120	1.583	190.008
10	<b>Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 միջից ցածր</b> Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B - 7,5 դասի բետոնով	խմ	16.2	43.633	706.851
11	Խամքարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի	խմ	5.3	44.933	238.144
12	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	113.8	64.646	7356.678
13	Ամրան Փ8A240C	տն	2.8	392.118	1097.930
14	Ամրան Փ16A500C	տն	2.12	379.037	803.558
15	Ամրան Փ18A500C	տն	1.855	379.037	703.113
16	Ամրան Փ28A500C	տն	0.0425	379.037	16.109
17	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	38.5	53.857	2073.507
18	Խամքարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B -7,5 դասի	խմ	8	44.933	359.462
19	Բետոնե աստիճանների պատրաստում -3,3 միշում B-7,5 դասի բետոնով	խմ	1.1	43.632	47.996
20	Նույնի, բետոնե հիմնատակի պատրաստում B-7,5դասի բետոնով	խմ	3.5	43.633	152.715
21	Նույնի, 300մմ հաստ միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.7	76.347	53.443
22	Արտաքին պատերի երկշերտ ջրամեկուսացում բիտումի մածիկով	քմ	6.9	1.393	9.613
23	Ներքին պատերի միաշերտ ջրամեկուսացում բիտումի մածիկով	քմ	7.6	0.711	5.404
24	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	4.35	116.089	504.986
25	Ամրան Փ8A240C	տն	0.130	392.118	50.975
26	Ամրան Փ22A500C	տն	0.442	379.037	167.534
27	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.232	1201.758	278.808
28	Միաձույլ ե/բետոնե պարզունակների B-20 դասի բետոնով	խմ	0.17	99.303	16.881
29	Ամրան Փ 8A240	տն	0.011	392.118	4.313

1	2	3	4	5	6
30	Ամրան Փ12A500C	տն	0.009	379.037	3.422
31	Ամրան Փ18A500C	տն	0.012	379.037	4.548
32	Ամրան Փ25A500C	տն	0.009	379.037	3.422
33	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.001	1201.758	1.202
34	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով	խմ	89.98	94.692	8520.358
35	Ամրան Փ6, 8A240C	տն	0.650	392.118	254.877
36	Ամրան Փ10A500C	տն	0.768	462.040	354.847
37	Ամրան Փ12A500C	տն	3.625	379.037	1374.009
38	Ամրան Փ16A500C	տն	0.125	379.037	47.380
39	Ամրան Փ18A500C	տն	0.024	379.037	9.097
40	Ամրան Փ22A500C	տն	2.113	379.037	800.905
41	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.293	1201.758	352.115
42	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	0.47	100.707	47.332
43	Ամրան Փ6A240	տն	0.016	392.118	6.274
44	Ամրան Փ12A500C	տն	0.065	379.037	24.637
45	Ամրան Փ16A500C	տն	0.015	379.037	5.686
46	ՄՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում -2,85 դեպի 0,00 միջ B-20 դասի բետոնով	խմ	1.9	82.508	156.764
47	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.5	43.632	21.816
48	Ամրան Փ8A240	տն	0.053	392.118	20.704
49	Ամրան Փ16A500C	տն	0.274	379.037	103.818
50	<b>Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 միջից բարձր</b> Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	50.69	111.660	5660.068
51	Ամրան Փ8A240C	տն	1.751	392.118	686.598
52	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.091	379.037	34.492
53	Ամրան Փ22A500C	տն	5.082	379.037	1926.265
54	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	1201.758	12.018
55	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.13	109.446	14.228
56	Ամրան Փ8A240C	տն	0.013	392.118	5.098
57	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.016	379.037	6.065
58	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	6.8	104.825	712.811
59	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	124.10	99.303	12323.488
60	Ամրան Փ6, 8A240	տն	2.329	392.118	913.360
61	Ամրան Փ8A500C	տն	1.189	437.870	520.628
62	Ամրան Փ12A500C	տն	1.216	379.037	461.023
63	Ամրան Փ16A500C	տն	1.497	379.037	567.418
64	Ամրան Փ18A500C	տն	2.923	379.037	1107.811
65	Ամրան Փ25A500C	տն	0.058	379.037	21.833
66	Ամրան Փ28A500C	տն	0.705	379.037	267.335
67	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.219	1201.758	263.185
68	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	24.74	83.330	2061.581
69	Ամրան Փ6, 8A240	տն	0.375	392.118	147.044
70	Ամրան Փ12A500C	տն	1.111	379.037	421.110
71	Ամրան Փ18A500C	տն	0.150	379.037	56.856
72	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	141.75	33.873	4801.428
73	Նույնի բետոնացում B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	89.86	86.691	7790.046
74	Ամրան Փ6, 8A240C	տն	0.553	392.118	216.841

1	2	3	4	5	6
75	Ամրան Փ10A500C	տն	8.935	462.040	4128.331
76	Ամրան Փ12A500C	տն	6.369	379.037	2414.086
77	Ամրան Փ16A500C	տն	1.175	379.037	445.368
78	Միաձույլ ե/ք բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.41	100.707	141.997
79	Ամրան Փ6A240	տն	0.043	392.118	16.861
80	Ամրան Փ12A500C	տն	0.182	379.037	68.985
81	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3միչի վրա B-20դասի բետոնով	խմ	184.1	82.508	15189.632
82	Ամրան Փ6A240	տն	0.245	392.118	96.069
83	Ամրան Փ12A500C	տն	10.272	379.037	3893.467
84	Ամրան Փ14A500C	տն	4.774	379.037	1809.522
85	Ամրան Փ18A500C	տն	0.013	379.037	4.927
86	Միաձույլ ե/ք հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով ՄՅ-1	խմ	6.80	104.825	712.811
87	Ամրան Փ8A240	տն	0.122	392.118	47.838
88	Ամրան Փ18A500C	տն	0.245	379.037	92.864
89	Միաձույլ ե/ք հովհարի պատրաստում +2,7միչում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1, +հեծան ՄՅ-1)	խմ	1.7	108.598	184.616
90	Ամրան Փ8A240	տն	0.029	392.118	11.254
91	Ամրան Փ8A500C	տն	0.073	437.870	31.877
92	Ամրան Փ12A500C	տն	0.008	379.037	3.032
93	Ամրան Փ16A500C	տն	0.046	379.037	17.436
94	Ամրան Փ18A500C	տն	0.015	379.037	5.686
95	Բետոնե աստիճանների պատրաստում 0,00-ից դեպի +0,45միչ B-7,5 դասի բետոնով	խմ	2.3	43.632	100.354
96	ՄՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում +0,45 դեպի +3,3միչ B-20 դասի բետոնով	խմ	1.9	82.508	156.764
97	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.5	43.632	21.816
98	Ամրան Փ8A240	տն	0.055	392.118	21.449
99	Ամրան Փ16A500C	տն	0.274	379.037	103.818
100	<b>ՄԻՋՆՈՐՄՆԵՐ</b> Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	356	4.863	1731.402
101	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	107.5	33.873	3641.295
102	Ամրան Փ8A500C	տն	2.759	489.027	1349.225
103	<b>Դռներ, պատուհաններ</b> Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	123.977	4501.319
104	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1.92	123.977	238.036
105	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1.20	111.351	133.621
106	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խուլ) մաս	քմ	17.04	60.417	1029.502
107	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	75.941	174.969
108	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խուլ) մաս և V-2 խուլ վիտրաժ	քմ	25.03	41.399	1036.219
109	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-1	հատ	14	97.029	1358.408
110	Ներքին, խուլ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-2----Դ-3	հատ	43	97.029	4172.252

1	2	3	4	5	6
111	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-4----Դ-4*	հաստ	4	310.493	1241.973
112	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռների տեղադրում Դ-5, Դ-5"	քմ	3.5	49.041	171.427
113	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	7	2.197	15.381
114	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.25	75.941	398.905
115	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	13.58	38.812	527.062
116	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	100.11	66.821	6689.422
117	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.17	41.399	2656.662
118	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	զծմ	86.22	4.142	357.133
119	<b>Հատակներ</b> Հողի տոփանում խճաքարով	քմ	735	0.448	329.545
120	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	107.5	47.734	5131.440
121	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8,3կգ/քմ)	տն	5.93	493.760	2927.996
122	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	2110	2.501	5276.600
123	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրա	քմ	1913	4.774	9131.322
124	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	615	1.473	905.360
125	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1262	1.693	2137.705
126	Մանլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	454.34	13.500	6133.462
127	Մանլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	33.42	23.226	776.203
128	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	33.42	1.473	49.226
129	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մանլագրանիտե սալերով	զծմ	171.8	1.639	281.496
130	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	160.32	12.060	1933.437
131	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զծմ	80.1	1.497	119.922
132	Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	1178.586	12.398	14612.298
133	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎՔ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	18.867	4856.971
134	Կավրոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.8	17.047	1991.089
135	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	1.990	68.288
136	<b>Տանիք</b> Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3.681	639.611	2354.279
137	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0.181	1150.203	208.067
138	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6.616	677.187	4480.269
139	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.196	1129.864	221.196
140	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	19.468	683.193	13300.403

1	2	3	4	5	6
141	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.165	1070.216	1246.663
142	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	31.306	43.481	1361.229
143	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1329.3	1.502	1996.034
144	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	35.2	271.689	9571.593
145	Նույնի երեսում (տակից) ՕՍՍ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1749.19	4.641	8117.265
146	Գոլորշամեկուսիչ շերտի փռում	քմ	1749.19	3.467	6064.228
147	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքանքակե սալերով	քմ	1749.19	11.604	20297.772
148	ՕՍՍ սալերի տեղադրում 10մմ հաստ. (քիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	2019.7	2.949	5956.768
149	Քիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մողիֆիկացված քիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	2019.7	11.478	23182.298
150	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	35.2	22.678	798.943
151	ՕՍՍ սալի մասնակի լաքապատում	քմ	297.2	0.587	174.566
152	Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	156.9	9.033	1417.206
153	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	19	7.591	144.224
154	Ջրիս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	95.6	6.986	667.957
155	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0.707	752.196	531.803
156	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	43.481	30.741
157	<b>Հարդարման աշխատանքներ</b> Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2847.05	3.618	10300.605
158	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	765.31	3.305	2529.536
159	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	6.409	64.937
160	V-2, V-4, V-5 վիտրամների վերևի մասի լցափակում գիպսուկարտոնե հարթասալերով	քմ	12.9	5.589	72.095
161	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	1051.08	3.763	3954.879
162	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	379.62	3.984	1512.257
163	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2879.0	2.358	6788.627
